

ՆԱԿԱԿԱԼԵՎ ՅԵՎ Խ. ՅՈՒ. ԲԵՐՄԱՆ

ԻՆՉ ՀԻՎԱՆԳՈՒԹՅՈՒՆ Ե ԳՐԻՊԸ
Յ Ե Վ,
ԻՆՉՊԵՍ ՊԱՅ-ՔԱՐԵՆԻ ՆՐԱ ԴԵՄ

ՊԵՏՏՐՈՍ

1938

ՅԵՐԵՎԱՆ

646.921.5

1675

Bu-25

Bu-25 Buhin Quid, p. 2. h

Abundant, P.

See bibliography p. 2. h

Spring -

204.

Ն. ՑԱԿՈՎԼԵՎ ՅԵՎ Ֆ. ՅՈՒ. ԲԵՐՄԱՆ

1991 թ.

ԻՆՁ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Ե

616-921-5 ԳՐԻՊԸ

Յմ-95

ՅԵՎ

ԻՆՁՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ ՆՐԱ ԴԵՍ

1675

A $\frac{1}{2492}$



ՊԵՏՏՐՈՍ

1988

ՅԵՐԵՎԱՆ

ԳՐԻՊԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼԸ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ- ՆԵՐԻ ԴՈՐԾՆ Ե

Դրիպն ամենատարածված հիվանդութիւններէց մեկն է: Ժամանակ առ ժամանակ զրիպի բոնկումներ են առաջ գալիս: Այդ բոնկումներն ընդգրկում են համարյա ամբողջ ազգարնակութիւնը, ինչպէս այդ յեղով, որինակ, 1918 թվին:

Բայց նույնիսկ այն ժամանակ եւ, յերր զրիպը համաճարակի բնույթ չի բնորոշում, դարձյալ զգալի թվով հիվանդներ են լինում, և մենք այդ հիվանդութիւններէց բավականին մնասովում ենք: Բանն այն է, վոր միլիոնավոր բանվորական որեր և կոլտնտեսականների աշխուրներ են կորչում, միլիոնավոր ռուբլիներ են ծախսվում անաշխատունակ որերի համար վճարելու և հիվանդացածներին բուժելու նպատակով:

Դրիպից առաջացող մահացութիւնը մեծ չէ: Գրիպի յերկարատե, ձգձգվող հիվանդութիւնը հազիւադեպ է: Սակայն, պետք է հաշվի առնել,

վոր գրիպը հաճախ բարդութիւն է և տալիս,
ինչպէս, որինակ, թոքերի բորբոքում: Դրա հե-
տեանքով հիվանդութիւնը կարող է յերկար ժա-
մանակով խախտել մարդու առողջութիւնը:

Սրանից պարզ յերևում է, վոր գրիպի դեմ
մղվող պայքարը պետք է լուրջ բանավորների,
կոլտնտեսականների, աշխատավորների դործը լի-
նի: Յուրաքանչյուր աշխատավոր պետք է գիտե-
նա, թէ ինչպէս պետք է զգուշանա գրիպից:

ԳՐԻՊԸ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ և

Դրիպը վաւակիչ հիվանդութիւն է: Դրիպն
առաջ է գալիս միկրորենից, վարոնք մեծ քանա-
կով թյամբ դանվում են հիվանդի թոքերում, բրոն-
խներում (бронхи) կոկորդում, քթաստուղնում
և քերանում: Սոսեկու, հազալու և փռշտալու ժա-
մանակ հիվանդը միկրորենները թքի ու լորձի մա-
նըր մասնիկների հետ դուրս է շարժում շրջա-
պատող տարածութեան մեջ, առաւելաների ու
մարդկանց վրա:

Դրիպի միկրորենները չափազանց անտոկուն
են: Թքի և լորձի չորանալու դեպքում, արևի
լույսի ազդեցութեան տակ միկրորենները փոշնա-

նույն քանի ժամվա ընթացքում: Իսկ ա-
վելի շաբաթ մի քանի բողոքի ընթացքում միկրո-
ները վնասնում են բարձր ֆերմաստիճանի աղ-
ղեցու Թյունից (շոր շոր, յեռացում):

Միկրոնների փոխանցումը հիվանդներից ա-
ռողջներին՝ կարող և կատարվել հիվանդների
հետ խոսելիս, նրանց հազարու և փոշալու
ժամանակ:

Այդ բանը պատահում և նաև հիվանդի հետ
միևնույն անկողնում քնելուց, ընդհանուր ամա-
նից ուտելու և խմելու ժամանակ, յերեսորբիչ-
ները, Բաշկիրականները միասեղ զարմածելուց և
այլն:

Գ Ր Ի Պ Ի Ը Ն Թ Ա Յ Ք Ը

Գրիպը շատ դանադանակերպ և ընթանում:

Ամենից հաճախ նա ընթանում և թեթև ձե-
լով: Այդ դեպքում հիվանդացածը հատուկ խնամ-
քի և բուժման կարիք չի ունենում: Գրիպի այդ
ձևն իրեն զգալ և տալիս հարբուխով, հազով,
դիտացավբով: Զերմաստիճանը չի բարձրանում,
կամ թե բարձրանում և շատ աննշան:

Թեթև ձևով հիվանդացածներն առողջանում
են 3—5 օրվա ընթացքում:

Այլի ծանր դեպքերում մարմնի ծանր բարձրանում և մինչև 39 և 40 աստիճան, հազն ու հարբուխը կարող են սաստկանալ: Հիվանդը մեծ ջարդվածութուն ու թուլութուն և զգում: Նա ստիպված և լինում պառկել անկողնում:

ԳՐԻՊԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գրիպով հիվանդանալու կասկածներ յերևալու դեպքում, անհրաժեշտ և կիրառել հետևյալ միջոցները.

1. Հիվանդին ուղարկել բուժարան բժշկի մոտ, կամ թե ոգնություն հոսոցնալ բժեկին հրավիրել սուս:

2. Վարքան հնարավոր և՛ հիվանդին առանձնացնել առողջներից: Դրա համար պետք և ունենալ՝ առանձին անկողին, աման, յերեսորբիչ և տնային զործածության այլ առարկաներ: Հիվանդի մահճակալի մոտ դնել թքաման (նրա մեջ լցնել լիզուլի Յ-տոկոսային լուծույթ):

3. Այն սենյակում, վորտեղ պառկած և հիվանդը, մաքրութուն պահպանել: Ամեն որ, առավոտյան ու յերեկոյան, թաց շորով մաքրել հատակը (թաց շոր փաթաթած խողանակով ավելի): Կահարասիքի և տնային զործածության

առարկաների փոշին մաքրել թաց շարով: Որական 2 անգամից փոշ պակաս ողափոխել սենյակը (բանալ ողանցքը), նախապես տաք ծածկելով հիվանդին:

4. Հիվանդի կեղտոտ սպիտակեղենը, սավանները, թաշկինակները, յերեսաբլիչները յեռացնել սոդայի կամ մոխրաջրի լուծույթի մեջ և այս բանից հետո միայն լվանալ: Կարելի չենաւ այդ բոլոր իրերը դնել առանձին թափ մեջ և առատորեն թրջել լիզովի 3-տոկոսային լուծույթով:

5. Հիվանդի ամանն, ողտազործելուց հետո, յեփ տալ ջրի մեջ:

6. Վոշ մի գեպքում չուակել հիվանդի ուտելիքի մնացորդները:

7. Հնարավորության սահմաններում, առանձնացնել մեկին՝ հիվանդին խնամելու համար: Խնամողն ամեն անգամ, հիվանդի, կամ նրա ամանի և սպիտակեղենի հետ շփվելուց հետո, պետք է ձեռքերը լվա սապոնով: Խնամողը պետք է հազնի խալաթ, կամ փափուկ զործվածքից մի այլ հագուստ:

8. Հիվանդները պետք է ուշադրությամբ կատարեն բժշկի տված բոլոր խորհուրդները: Հագալու և փռշտալու ժամանակ բերանն ու քիթը

ծածկէն քաշկինակով: Թքէն միայն Խճ. անի
մեջ: Մինչև լիովին առողջանալը Համբարում յե-
րեխաներին ու հարազատներին:

9. Գրիպով նուշնիսկ թեթև հիվանդանալու
գեպքում ել հասարակական վայրեր (կինո, քառ-
րոն, ժողով և այլն) չհաճախել:

10. Յերբ կասկած ելինում, թե յերեխան հի-
վանդացել ե գրիպով, չպետք ե թույլ տալ, վոր
նա գնա դպրոց, մանկապարտեղ, մսուր և այլն:

Յեթե գրիպով վարակվելու վտանգ կա, հի-
վանդությունը կանխելու նպատակով, վորպէս
միջոց, խորհուրդ ե տրվում ընդունել որական
1—2 հար «կալցեքս»: Այդ դեղը վաճառվում ե
բոլոր գեղատներում: Այդ դործ ե անվում նաև
գրիպը բուժելու նպատակով:

ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՅ Ե ԳՐԻՊԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մաքրություն պահպանելը խիստ կարևոր
միջոց ե ընդհանրապէս վարակիչ հիվանդություն-
ները և մասնավորապէս գրիպը կանխելու համար:

Շնեքի մաքրություն, վորտեղ աշխատում են
ու ապրում, ողի մաքրություն բանելու ե բնա-

կելի շենքերում, տնային գործածության առարկաների մաքրություն, մարմնի, սպիտակեղենի, հագուստի մաքրություն— ահա ամենահուսալի միջոցը՝ վարակիչ հիվանդությունները, այդ թվում՝ գրիպը, կանխելու համար։ Իսկ մաքրության վեր միջոցներն են առանձնապես կարևոր՝ կյանքում կիրառելու համար։

Այդ միջոցները հետևյալներն են.

1. Ամեն որ հեռացնել շենքից աղբը, թափթիփուկներն ու փոշին։ Հատակը մաքրել թաց շոր փաթաթած խոզանակով, այդպիսի շորով մաքրել նաև փոշին։

2. Խնամքով ողափոխել բանելու և բնակելի շենքերը։

3. Հատակին չթքել, այլ թքամաններ գործածել։

4. Վրչ վորի հետ չուտել ու չխմել մեկ ամսնից։

5. Ուշադրությամբ հետևել հասարակական սննդի ձեռնարկությունների մաքրությանը։ Բոլոր ամանեղենը, մանավանդ գդալներն ու բաժակները, այդ ձեռնարկություններում պետք է լավ լվանալ տաք ջրով, սապոնով կամ սոդայով։

6. Հաղալու և փոշտալու ժամանակ մի կողմ

չուս զալ—հարևանից կամ խոսակցից, կամ թե
ձեռքի ափով կամ թաշկինակով ծածկել բերանն
ու քիթը:

7. Ուտելուց առաջ խնամքով լվանալ ձեռ-
քերը ջրով ու սապոնով:

8. Խուսափել բարեկիր ձեռք թոթլելուց:

9. Հետևել բերանի մաքրությանը, ամեն որ
մաքրել տաամենքը և ողողել բերանը:

10. Քնել առանձին անկողնում, առանձնա-
պես չքնել նույն անկողնում այն մարդկանց հետ,
վարանց կարելի չե կասկածել դրիպով հիվանդ
լինելու մեջ (հարբուխի, հաղի առկայության
և այլն):

ՈՐԳԱՆԻԶՄԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՎՈՐՊԵՍ ԳՐԻՊԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԻՋՈՅ

Պետք և հոգալ սրգանիդմի ընդհանուր ամ-
բապնդման մասին: Պետք և խուսափել այն ամե-
նից, ինչ վոր կարող և թուլացնել որդանիդմր
Իսկ թ՛նչ պետք և անել զբա համար: Դրա
համար անհրամեշտ և.

1. Ամբապնդել որդանիդմր՝ աստիճանաբար
ընտելացնելով իրեն՝ ամեն որ մարմինը մինչև

գոտկատեղը սենյակի ջերմաստիճան ունեցող ջրով շփելուն կամ լվանալուն:

2. Ավելի հաճախ լինել թարմ ոդուժ:

3. Վարձեցնել իրեն միշտ բթով շնչելուն:

4. Պարապել սպորտով ու մարմնամարզությամբ:

5. Խուսափել մրսելուց՝ վոտքերը թրջելուց և մարմինը խիստ սառեցնելուց: Առանց վերնազգեստի՝ տաք սենյակից ցուրտ տեղ դուրս չգալ: Պայքարել վոտքերի քրտնոտության դեմ՝ հաճախ լվանալով վոտքերը տաք ջրով ու սապոնով: Հագուստն ու կոշիկները թրջվելու դեպքում անսպաժան հանել և շտապ չորացնել:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԻՊԻ ԴԵՄ ՄՂՂՈՂ ՊԱՅԲԱՐՈՒՄ

Գրիպի դեմ մղվող պայքարում կարելի չէ վճռական հաջողությունների հասնել միայն մղջ բանվորական ու կոլտնտեսային հասարակայնության ակտիվ մասնակցությամբ:

Առաջին հերթին մեծ ակտիվություն և ինքնադործունեություն պետք է ցուցաբերեն առողջապահության գծով հասարակական աշխատանք:

աանողները՝ խորհուրդների առողջապահական
սեկցիաների անդամները, ձեռնարկաթյուններում
և խորհանաեսաթյուններում առողջապահու-
թյանն սծանդակող խմբակների անդամները, բնա-
կելի շենքերի և հանրակացարանների, կոլանաեսու-
թյունների ու զպրոցների առողջապահության
քթիջների անդամները, ինչպես նաև հասարակու-
կան սանիտարական լիազորները:

Իսկ ինչ պետք է անեն առողջապահության
հասարակական աշխատողները զրիպի դեմ մզվող
պայքարում:

Առաջին հերթին նրանց ոգնությունն ալդ
զործում հետեյալն է.

1. Նրանք կազմակերպում են առանձին ծախ-
սեր և հիմնական վերականաւորումներ չպահանջող
ամենահասարակ առողջապահական միջոցառում-
ների անցկացումը: Նրանք պայքարում են հա-
նուն մաքրության՝ բանելու և բնակելի շեն-
քերում, հասարակական սգտազործման տեղե-
րում—զպրոցներում, ճաշարաններում և այլն:

2. Նրանք կազմակերպում են աշխատալոր-
ների տարբեր խմբերի սոցմրցումը՝ մաքրության
և հիգիենայի պահանջներն ել ավելի լալ պահպա-
նելու և կատարելու համար:

3. Նրանք ստուգում են մաքրության ու հիգիենայի կանոնների կատարումը ձեռնարկություններում, քնակարաններում և հասարակական ողտաղործման տեղերում: Նրանք պարզում են այդ գործում յեղած թերություններն ու զանցառությունները և ձգտում են վերացնել դրանք: Հատուկ ուշադրություն են դարձնում նրանք ճաշարանների, բուֆետների, հանրակացարանների, ահումբների, յերկաթուղու կայարանների և հասարակական ողտաղործության այլ տեղերի սանիտարական դրության վրա:

4. Նրանք տարածում են դիտելիքներ գրիպի դեմ պայքարելու միջոցների վերաբերյալ: Նրանք սկսում են դասախոսություններ, զեկուցումներ, զբույցներ կազմակերպելու. կազմակերպում են զբքերի բարձրածայն ընթերցանություններ, գրականություն վաճառելու և բաժանելու զործը և այլն:

5. Նրանք իրենց անձնական վարքով որինակ են ապիս մնացած աշխատավորներին, թե ինչպիս պետք է պահել իրեն, վորպեսզի կարելի լինի պահպանել հիգիենայի պահանջները, չհիվանդանալ և չվարակել իրեն շրջապատողներին:

ԴՐԻՊԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՏԵՆԵՐՆ
ԻՐԱԳՈՐԾԵԼԻ ՅԵՆ ՅԵՎ ԴՈՐԾԱԴՐԵԼԻ

Այսպես են զրիպի զեմ պայքարելու միջոց-
ները: Այս բոլոր միջոցները կարելի չէ հեշտու-
թյամբ իրագործել ու գործադրել:

Պետք է միայն գիտակցել ու հասկանալ, վոր
անհրաժեշտ է անշեղորեն իրագործել այդ միջոց-
ները: Հարկավոր է կամքի ուժ, վորպեսզի կյան-
քում ակտիվորեն կիրառվեն մաքրության հա-
մար մղվող պայքարի, զրիպի զեմ պայքարելու,
հիվանդությունները պակասեցնելու համար մղ-
վող պայքարի բոլոր միջոցառումները:

Բանվորները, կոլտնտեսականները և բոլոր
աշխատավորները պարտավոր են միահամուռ ու
համերաշխ մասնակցել մաքրության համար, տոնդ-
ջության համար, կուլտուրայի համար—տոնդ-
ջական լավագույն կյանքի համար մղվող պայքարին:

Քարգմ. Ազ. Շաթիրյան
 Գառ. խմբ. բմ. Դուրխյան
 Լեզվ. խմբ. Հ. Գեորգոսյան
 Տեխ. խմբ. Լ. Ոհանյան
 Սրբազրիչ՝ Ա. Արզաքանյան

A $\frac{1}{2492}$

Դրամի վրա լիազոր՝ Ա. 4605. Հրատ. № 4570.

Գատվեր 339. Տիրամ 3000.

Թուղթ 72 $\times$ 105. Տպագր. 1 մամ.

Մեկ մամ. 24200 նշան. Հեղինակ՝ Գ. 53 մամ.

Հանձնված է արտադրության 27 մարտի, 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար 22 հունիսի, 1938 թ.

Գեորգյանի | տպարան, Յերեան, Լենինի 65

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037248

4478, 20 4.

А $\frac{1}{2492}$

И. Н. Яковлев и Ф. Ю. Берман
Что за болезнь грипп
и
как с ним бороться
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.